

### ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

#### ՍՈՂՈՍՐԻ ԿԱՂՍԱԿՈՅՈՆ


##### Հայազգի գանձերէց

Համարակարգութեան պաշտօնարարին Հոնձարիոյ:

Սոլոմոն Կաղսակոյեան<sup>1</sup> Հունգարիոյ պետական համարակալութեան (département des comptes) բարձրագատիւ գահերեցը՝ Գլխաւորութեան Կերլա-Հայա-

բաղաբէն սերած է: Հայրն էր Ղուկաս Կաղսակոյեան, մայրը՝ Քերեզիս Կալ: Կաղսակոյեան հարուստ ընտանիքն իւր ծննդեան տեղէն որ է՝ Գուս-Քասոյոյ, պատրան ետա - Կոճ - Գուս - Սոլոմոն գաւառը գաղթեց 1815ին: Հոն ծնաւ Սոլոմոն 1830 Փետր. 2ին: Սակայն Սոլոմոն Կաղսակոյեան միակ որդին չէր: Երկինք պատուաւ որ երկրատերը 18 զաւակով օրհնած էր, որոնցմէ վեցը միայն կենդանի են պիտի՝ չորս մանչ ու երկու աղջիկ:

Սոլոմոն իւր սկզբնական կրթութիւնն Կերլա-Հայաբաղաբն առաւ, իւր ժամանակին մեծանուն Չարթ (Չարթարիա)



ՍՈՂՈՍՐԻ ԿԱՂՍԱԿՈՅՈՆ

վարժագետին առաւորութեան տակ: Սոլոմոնին վրայ աղայութեան ժամանակն արդէն կը տեսնուէր մեծ տաղանդ ու սաստիկ սրամտութիւն, պնդպէս որ իւր վարժագետն օր մ'այսպէս ըսաւ. «Պիտի տեսնէք որ այս խելիքի տղան ժամանակաւ մեծ մարդ պիտի ըլլայ»:

Սոլոմոն վարժարանի ուսումնեբը՝ Սոլոմոն ու Բէշթ, իսկ Բրէսպուրի բաղաբն իրաւունք ստրկեցաւ: Անին ուսանողն իւր ուսուցչաց սիրականն էր: Առնց մէջէն մանաւանդ Ստեփ.

Հորվաթ մեծ ազդեցութիւն ունեցաւ պատանեկէն վրայ՝ իւր պատմական գաստիսութիւններով:

Հաղի թէ ուսումնարանաց որմբը թողուց, արդէն իսկ կը գտնենք զինք հունգարական շաղկապեցութեան պաշտօնէին՝ Ստեփանոս Սէէնյի դուքսին թով՝ իրբեւ վարժող իրաւանց: «Ամենամեծ հունգարացին» զտաղանդաւոր պատանին իւր յարմարութեանց ու սուր ըմբռնման համար ոչ միայն կը սիրէր, այլ եւ շատ կը յարգէր: Բայց Սոլոմոն երկայն ատեն այս պաշտօնին մէջ չկրցաւ մնալ: 1848ին յեղափոխութիւնը յարեան, Սոլոմոն բռնուեցաւ ու 1849ին վերը Գեօսիկ կրէց տարուեցաւ:

Անկէ ապառիտով ուրիշ ասպարէզ մ'ընտրեց իրեն: Փոխանակ սրոյ՝ դրիչ առաւ ձեռքը, եւ Շուէ Պոսթ անուան տակ դուստնեք գրեց հունգարերէն լրագրաց մէջ: Իւր յօդուածները ժողովուրդը շատ սիրով կը կարգար: Պէտէյնանուամբ ողբերգական թատերագութիւնն, որ 1855ին 60 սովոր վարձարուեցաւ, թէ Բէշթ եւ թէ Գլազեկուրկ մեծ ծափահարութիւններով

խաղացուեցաւ: Այնուհետեւ գրեց երկու ողբերգութիւն ալ՝ մէկը՝ «Մորէ», մեկուրը՝ «Մարգարիտա Մայլաթ»: Քիչ ազդեցութիւն չըրին գիտնական աշխարհի առջեւ իւր բարձր ոճով գրուած յրապարակական իրաւանց գրուածները: Սոլոմոն իւր ծնողաց ծննդավայրն Կերլա չէր մտնար: Շատ յաճախ այցելութեան կ'ելլէր, ծանօթներն ու ազգականները տեսնելու համար, որոնց հետ միշտ թղթակցութեան մէջ էր: 1853ին անուստացաւ Յուլիան Մոզզաչին հետ եւ բնակութեան տեղ ընտրեց Կերլայի կից Կեմա գեղն, ուր տնտեսութիւն, գրականութիւն եւ բաղաբագրութիւն էին իւր գլխաւոր զբաղմունքը: Հոն ծնաւ իւր գուստրն, որ Հաղորդակցութեան պաշտօնարարին պետական բարտու-

<sup>1</sup> Հունգարերէն Gajzago. Այս Կերլաստանին կրտսեր Սոլոյ (Սոսհի) եւ կրտսեր, եւ որովհետեւ մէկ սուրբ կարծ ըլլալով՝ կը կոչուի: Կրտսեր Կաղսակոյեան կը կոչուի զինքը Հայրեն, որ եւ նորէն կոչուի եղաւ: Մանապէս հայերէն չէր գիտարարեցող չկարողանալով՝ նոյնին յի ձայն կու տային, որով եղաւ ի սկզբան Կայալոյ, նոյնն ալ կամայ կամայ Կայալոյ:

դարին՝ Հայազգի Ղուկասեանին Տետ ամուսնացած է :

Երբ 1861ին Հուսեգարից ներքին շփոթութիւնները քիչ մը խաղաղցան, Ներքին-Սոյնոք գաւառը զինքն առաինն գաւառական քարտուղար ընտրեց : Այս պաշտօնովը մեծ պատիւ եղաւ դատին, վասն զի ոչ միայն գրով այլ եւ քարտար ասեմախօսութեամբը մեծ փոփոխութիւններ յառաջ բերաւ : 1863ին Հայաքաղաքը զինք պատգամաւոր ընտրեց Հէրմանշդատի գաւառա-ժողովոյն մէջ : Ետևոյն ինք յանձն չառաւ : Բայց 1865ին Գլաղէնպարիկի եւ 1869ին քէշիկ տէրութեան պատգամաւորաց սենեկին ընտրութիւնն ընդունեցաւ ու մնաց Տոն մինչև 1870, այսինքն մինչև եւ այն տարին, երբ տէրութեան պատգամաւորաց սենեակն ու բազաւորին վստահութիւնը զինքն Տիմակուան մեծ պաշտօնին բարձրացուց :

Սոյլմանն ոչ միայն շատ բաժիններու (section) եւ մասնաժողովներու, եւ մասնանոց Հաշուեկշիռներու յանձնարարական ժողովներուն մասնակցեցաւ, ուր գործերն արտաքց կարգի ծանր են ու փափուկ եւ պատասխանատուութիւնը խիտ, այլ նաեւ պատգամաւորաց սենեկին բանակաւորաց ու բանակցութեանց մէջ շքեղ մաս ունեցաւ : Շատ զօրաւոր կերպով ալ վեհութեամբ կ'ատենաբանէր : Իւր ընտիր ճառախօսութիւններն միշտ մտադրութեամբ կը լսուէին :

Այս ժամանակներն Տօտ Իլէք՝ պատգամաւորաց սենեկին գահերիցաւ փոխաւորող վախճանելով՝ Սոյլմանին պատգամաւոր ընկերներուն վստահութիւնը զինք քարտուղարութեան նոյն գահերիցաւ փոխանորդութեան պաշտօնին բարձրացուց : Այս նոր պաշտաման մէջ ամէն կողմնակցութեանց Հաճութիւնն յիշքն գրաւեց : Vassánap (Կեւրօն) շարաթաթերթն ի մէջ այլոց յաջորդ կերպով կը խօսի անոր վրայ. « Հանդարտութիւն, անկողմնակալութիւն, Հաստատուն կամք, ուղիղ ու մաքուր ըմբռնում, արագ գիտ իրեն յատուկ են : Խառնակութեանց մէջ՝ խորհրդից ոչ նիւթն թիւր, ոչ գլուխը եւ ոչ քաղաքաւորութիւնն երբեք կը կորսցնեն : Խոստովանեալ ենք յայտնապէս՝ թէ Հոսեգարական պատգամաւորաց սենեկին մէջ այնպիսի գահերէց պէտք է, որ որիչ ամէն յատուկութիւններն զատ՝ ունենայ մանաւանդ անվեհերութիւն, եւ զիս՝ շատ մեծ չափով կը գտնենք յանձին Ս. Կաղակոյղեանի : »

1867ին անուանեցաւ նաեւ Ներքին-Սոյնոք գաւառին գլխաւոր ատենակցեալ, բայց մնաց նաեւ պատգամաւոր. վասն զի գեռ այն ատեն

անփառանելի էր պատգամաւորութիւն տէրութեան պաշտօնի Տետ :

1869ին Հունգարից ուղղափառաց խորհրդէն (congrès) — Փրանկ Տեազին առաջարկութեամբն — աշխարհական գահերէց ընտրուեցաւ : Նոյն խորհրդոյն իսկ կեկեղեցական գահերէցը միշտ Հունգարից նախագահարեւակոպոսն է : Նոյն ժամանակ փութով կը շինուէին Հունգարից մէջ երկաթուղիները, եւ Կաղակոյղեան երկաթուղեաց խորհրդոյն գահերէցն եղաւ : Իսկ քարտուղար Հանգուցեալ Գաբը. Գեմին (Keming) որ ետքէն Հայրդպեկցութեան պաշտօնեայ եղաւ :

Այսչափ պաշտօններն ամենայն ճշգրտութեամբ կատարելով՝ օրէօր բարձրագոյն պաշտօններու կը Տասնէր : 1870ին « Զեռնուողութիւն վասն ազգապահ զօրաց » կողմնակցութեան գահերիցաւ փոխանորդ ընտրուեցաւ : Բայց քիչ մ'ետքն երբ գահերէցը Յուլ. Անարաշի, Փր. Յովսէփ կայսրմէ Աւստրից արտաքին գործոց պաշտօնեայ անուանուելով՝ իրենն ազնաց, առանձին մնաց գահերիցաւ փոխանորդը, եւ ոչ միայն յօրինեց եւ կարգի դրաւ այն նշանաւոր ընկերութիւնը, Հապա նաեւ շատ տարի ալ զայն կառավարեց :

Հասաւ վերապէս 1870ին այն ամենաբարձր պաշտօնին, զոր Հունգարական թագաւորութեան մէջ՝ վստահութիւնը կրնայ երբեք մէկու մը շնորհել : Վասն զի տէրութեան պատգամաւորաց սենեակը՝ այն ժամանակ նոր կանգնած Համարակալութեան գահերիցաւ պաշտօնին առաջարկելի անձանց մէջ առաինն տեղը զինք գրաւ, զոր եւ Հաստատեց թագաւորն : Արդ այն բարձր պաշտօնին մէջ կը ծառայէ մինչև ցայսօր իւր թագաւորին, Հայրենեաց եւ տէրութեան բարձրապատիւ Սոյլմանն Կաղակոյղեան :

Երբ 1872ին այցելութեան ելաւ եւրպայնոցը, բարեկամացն ու ծանօթիցը, եւ Սոյնոք-Տոպոբա գաւառն իրեն — իրբեւ իւր վաղեմի պաշտօնատեսաւն, — ի նշան մեծարանաց՝ փառաւոր սուր մը պարգեւեց :

Այս բարձր պաշտօնն իւր անձին վրայ ամենեւեկն փոփոխութիւն յոռալ չբերաւ, Կաղակոյղեան պահեց միշտ այն սիրալիր յարաբերութիւնն զոր ունէր բարեկամաց : Ինք միշտ այն յառաջուանն է, մտերիմ, սրտազին, անկեղծ : Եւ ապահովապէս կրնանք բսել, որ հիմալ ալ այն սէրն ու Համակոյղութիւնը կը պահէ Հայաքաղաքին, զոր ունէր պատգամաւոր եղած ատեն : Ունինք բաւական պատճառ ուրախանալու այլ եւ

պարծելու եւս՝ որ մեր երբեմն-պատգամաւորն պսպիտի մեծ աստիճանի բարձրացած է: Գեռ մեր ակամօջաց մէջ կը հնչէ իւր ազգու ճառախօսութիւններուն հաճոյական ձայնը: Գեռ ցայսօր կը տեսնենք մեր հօգուց աշուրներոյն իւր մարտաօտարական անձն, որուն ին վստահութեամբ կը բարեմաղթենք որ իւր փառաւոր պաշտաման մէջ Աստուած իրեն մարի վայելուծն շնորհէ:

Կերպ-հայաքարագ: Ա. ՓԻՓԱՍ

**ԲԱՆԱՍՑԵՂՆԱԿԱՆ**

**ՈՒ ՄՈՇԵՆ Ի Մ**

Քեզ ո՞վ ազնիւ իմ՝ մայրիկ,  
Ո՞րչափ ունիմ՝ ըսելիք.  
Քանի՞օ՞ն եմ՝ պարտական  
Ազնիւ սիրոյդ մայրական:

Դու կրթեցիր զիս ցայսօր  
Անխոնջ ինամուրջ նորանոր.  
Առանց քզի մայի ստոյգ  
Տղայ մ՝անուտ եւ եղուկ.

Ընկերութեան մէջ անարգ  
Ունայնածոն եւ դատարկ:  
Քանի՞ ունիմ՝ արդ պարտիք  
Քեզ սիրելիդ իմ՝ մայրիկ:

— Միշտ տընեցար ծրգամբ շատ,  
Մերմանեցիր բայց առատ:  
Ուրախ եղիր, մայր ազնիւ,  
Հունձն կու գայ ըսգամթիւ:

ՅԻՌԱՌԻԱՍ

Չ. Բ.



**ԱՐՄԱՆԵՍՏԵՑԻՍԿԵՐԵՆ**

**ԱՌԵՆՑՐԱԿԱՆ**

**ԳՈՒՐԻՒՆ ԶՈՐԴՆԵԹԵՆ Ի ՄՐԱՆ**

Պարուի քարածէթն (pétrole) կը գերազանցեմ ամերիկեան քարածէթը նոյն իսկ իւր երկրորդական օգտակարութեամբը. միայն թէ կապտեան վաճառահանութեան (exportation) այս նոր կապակցութեան սկզբնաւորութիւնն, ինչպէս առ հասարակ, ոչ հայ՝ այլ օտարազգի ձեռնար-

կուներէ (entrepreneurs) եղած է: — Անգղիական Jardine Matheson & Co. ֆիրման Ռիկայի արուեստական լրագրոյն տեղեկութեանց համեմատ, Société commerciale et industrielle de naphte caspienne de Bacou ընկերութեան միջնորդութեամբը Յունիսի մէջ առաջին անգամ 134.000 բուտ (Pud = 16.38 քիլոկրամ) Պարուի քարածէթ անգղիական Monarch շոգեխառով չգործածած տարաւ: Այս վաճառքին գարտեան լուրը բաւական եղաւ ամերիկեան քարածէթին գինն իջեցնելու Տոն տեղուան վաճառատեղոյն մէջ: Այս առաջին յարադութեան վրայ Jardine Matheson & Co. ֆիրման աւելի մեծ քանակութիւն մ'իսկոյն գնեց ի Պաթումի: Ստուգիւ անակնկալ յարադութիւն ունեցաւ այս առաջին փորձը. քիչ ժամանակուան մէջ բոլոր վաճառքը 2.05 ստերլինի առ հարիւր քիլոկրամ ծախուեցաւ: Ճարմայցիք Պարուի քարածէթին անոր համար գերազանցութիւն կու տան քան ամերիկեանին, որովհետեւ ամերիկեանն ջերմութեան որոշ աստիճանի մէջ կրնայ բորբոքիլ: Ճարմոնի լրագրիք իսկ ի նպաստ Պարուի քարածէթին յայտնի կը խօսին եւ ի նմին կը նկատեն ցարդ մենավաճառեալ ամերիկեան սուղ ու վտանգաւոր քարածէթին յարածանակող հակառակորդը:

Կը յորդորենք մեր հայազգի վաճառականներն, որ չափայի, Սինկափորի եւ այլ ազգային անուանի վաճառականաց հետ յարաբերութեան մէջ մտնեն, եւ փոխանակ անգղիացի շահագիտաց հետ Պարուի քարածէթի գործը կատարելու՝ նոյնն ազգային վաճառականաց ձեռքը տան, եւ ասով թէ քարածէթի գործն եւ թէ չարանի հրապարակն ազգայնոց ձեռքը մնայ:

**ՄԱՆԵԼԱՆ ԵՐ ՏԱՐԻՆՎ ԵՐ**

Պաղղիական լրագիրք կը ծանուցանեն, որ կասպից ծովուն եզրերը մանկելու նոր առևակ մը գտնուած է: Տունը տեղացիներէն կանգ կ'անուանուի. անոր կը բաւնի եւ կը բարձրանայ 10 ոտնաչափ, իսկ բարձրիցն է 2—3 սանդիմեդր. M. O. Blankenburg քիմիագէտն ու երկրաբանն, որ կանափի զննութիւնն իւր մասնագիտութեան նիւթ ըրած է, զգուշաւոր մշակութեամբ ու արուեստգիտական գարմանմամբ յարողոց կանափէ մանկելու ընտիր նիւթ մը յառաջ բերել: Ասիկայ կակուղ, առաձգական եւ մետաքսազգի է. թելերը շատ դիմացկուն են եւ